ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 392 - Ա

«ԵՐԵՎԱՆԻ ՌՈՏԱՐԻ ԱԿՈՒՄԲ «ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Երևանի ռոտարի ակումբ «Ինթերնեյշնլ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 44,745,933 դրամ ընդհանուր արժողությամբ «Արևային կայանների տեղադրում բժշկական հաստատություններում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Երևանի ռոտարի ակումբ «Ինթերնեյշնլ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02708338) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էներջի սթոք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01308546) 2024 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 7844 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 80.3 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի մատակարարման և տեղադրման

աշխատանքների իրականացում՝ 19,516,740 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էներջի սթոք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01308546) 2024 թվականի մայիսի 6-ին կնքված՝ N 7843 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100,1 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 25,012,860 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էներջի սթոք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01308546) 2024 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 01-2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային կայանների օգտագործման վերաբերյալ ուսուցման ծառայությունների մատուցում՝ 216,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երևանի ռոտարի ակումբ «Ինթերնեյշնլ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

05.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ